ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔ

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի դասական աճուրդ վաճառք, որը տեղի կունենա 2024 թվականի դեկտեմբերի 13-ին, ժամը 11:00-ին Ստեփանավանի համայնքապետարանում (հասցե՝ ք. Ստեփանավան, Սոս Սարգսյան փ., շ. 1, 3-րդ հարկ, նիստերի դահլիճ):

Լոտ 1. մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Հ. Մեսրոպյան փողոց 45 հասցեում գտնվող, 0.0721 հա մակերեսով, 06-007-0055-0010 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս՝ բնակելի տուն կառուցելու համար:

1. Մասնակցության վճար 5000 ՀՀ դրամ:
2. Մեկնարկային գինը կազմում է 4326000 /չորս միլիոն երեք հարյուր քսանվեց հազար/ ՀՀ դրամ:
3. Նախավճարը կազմում է լոտի մեկնարկային գնի 50%-ը:
4. Քայլի չափը կազմում է մեկնարկային գնի 5%-ը:
5. Կառույցի հարկայնությունը մեկից-երկու հարկանի, կառուցապատման տոկոսը՝ մինչև 60%:
6. Հողամասում առկա հաղորդակցուղիներ չկան:
7. Տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումներ /ներառյալ սերվիտուտներ/ առկա չեն:

Լոտ 2. մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Դեսինի փողոց 28/11 հասցեում գտնվող, 0.01 հա մակերեսով, 06-007-0109-0088 կադաստրային ծածկագրով, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, կապի գործառնական նշանակության հողամաս՝ բջջային կապի կայան կառուցելու համար:

1. Մասնակցության վճար 5000 ՀՀ դրամ:
2. Մեկնարկային գինը կազմում է 2000000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ:
3. Նախավճարը կազմում է լոտի մեկնարկային գնի 50%-ը:
4. Քայլի չափը կազմում է մեկնարկային գնի 5%-ը:
5. Հողամասից 50 գծմ հեռավորության վրա անցնում է g/ճ դ-108մմ վերգետնյա գազատար:
6. Տվյալ հողամասի նկատմամբ սահմանափակումներ /ներառյալ սերվիտուտներ/ առկա չեն:

Աճուրդն անցկացվում է բաց: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ, անձը հաստատող փաստաթուղթ և Ստեփանավանի համայնքապետարանի 900255001688 հաշվարկային հաշվին աճուրդի մասնակցության վճարի՝ 5000 ՀՀ դրամի վճարման անդորրագիր: Աճուրդի մասնակիցներն աճուրդի անցկացման օրը մուծում են նախավճար՝ տվյալ հողամասի մեկնարկային գնի 50 տոկոսի չափով: Եթե մասնակիցն աճուրդի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ: Աճուրդի դրված հողամասի նվազագույն քայլի չափը հաշվարկվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը: Հայտ ներկայացնելու և աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու համար դիմել՝ Ստեփանավանի համայնքապետարան ք. Ստեփանավան, Սոս Սարգսյան փ., շ.1, 2-րդ հարկ, 204 աշխատասենյակ:

Հայտերն ընդունվում են մինչև 2024 թվականի դեկտեմբերի 9-ը Ստեփանավանի համայնքապետարանում յուրաքանչյուր երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00 - 14:00 ընկած ժամանակահատվածի):

Լրացուցիչ տեղեկությունների համար՝

հեռ.՝ (0256) 2 22 33,

էլ.փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Կայք՝ www.stepanavan.am

Ստեփանավանի համայնքապետարան